№ 52 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 23

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 52 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 23

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի առարկութիւն ևս. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Եապօնական յաղթանակների ազդեցութիւնը արևելքի ժողովուրդների վրա. Բազուի աղէտի զոհերի օգտին. Զխաբ գիւղի հրկիզվածների օգտին. Նամակ Պետերբուրգից. Նամակ Քութայիսից. Նամակ Հին-Նախիջևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԻ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒՍ

Մենք նուիրեցինք մի քանի յօդուածներ այն ցանկալի փոփոխութիւնների հարցին, որոնց կարօտ է մամուլը մեր երկրում։ Մենք ցոյց տուինք, որ մամուլի ընդհանուր ազատութեան բարիքը պէտք է տարածվի հաւասարապէս բոլոր լեզուներով լոյս տեսնող հրատարակութիւնների վրա։ Մենք նոյնպէս ցոյց տուինք, որ գրաքննութեան պահպանելը տեղական թերթերի համար, բացի իր բարոյական և հասարակական վտանգից, կունենայ և գործնական այն մեծ անպատեհութիւնը, որ նա կը պահանջէ գրաքննիչների մի լէգէօն, որպէս զի կարելի լինի բաւարարութիւն տալ մեր երկրի զանազան մասերում հիմնվելիք թերթերին։

Կարևոր ենք համարում մատնացոյց անել և մի հանգամանքի վրա, որ գործնական կեանքի մէջ էական նշանակութիւն ունի։

Մենք ներկայումս մեր երկրում ականատես ենք մի այսպիսի երևոյթի։ Մի լրագրում կամ ամսագրում լոյս է տեսնում մի յօդուածք, մի թղթակցութիւն, որը միւս թերթում չէ անցել։ Ականատես ենք եղել և այն բանին, որ մի լրագրում երևեցածը անկարելի է եղել արտատպել միւս լրագրում։ Այդ երևոյթը, որքան էլ առաջին անգամից օտարոտի և վրդովեցուցիչ երևայ, բայց նա բնական է և բոլորովին հասկանալի։ Գրաքննիչները, անկասկած, չեն կարող լինել միատեսակ մտածող, միևնոյն հայեացքները և տեսակէտները դաւանող մարդիկ։ Նրանց գրչի վրա ազդում են և այն՝ թէ ինչ տեսակ են նրանք հասկանում օրէնքը ու շրջաբերականները և այն՝ թէ ինչ ընդհանուր հայեցակէտներ ունեն նրանք գրական և հասարակական գործերի մասին։ Այստեղից առաջանում է մամուլի օրգանների համար մի խառն դրութիւն, որը տալիս է գրաքննական գործին քմահաճոյքի ձև։

Դեռ Թիֆլիսում, որտեղ գոյութիւն ունի մի ընդհանուր կենտրոնական հիմնարկութիւն, գրաքննական մի կոմիտէ, որտեղ գրաքննիչները ամեն օր միմեանց հետ պատահում են, ամեն օր խորհրդակցում են, ամեն օր պայմանաւորվում են, իսկ շաբաթը մի անգամ նաև կանոնաւոր կոլլեգիալ նիստում մանրամասնօրէն քննում են ընթացիկ հարցեր։ Եթէ այդպիսի նպաստաւոր պայմաններում չէ աջողվում միակերպութիւն առաջացնել գրաքննական գործի մէջ, որքան աւելի դժուար կը լինի նոյնը իրագործել, երբ գրաքննիչները ցրված կը լինեն մեր երկրի զանազան մասերում և կարողութիւն չեն ունենայ յաճախակի միմեանց հետ տեսնվել և պայմանաւորվել իրանց գործավարութեան վերաբերութեամբ։ Եթէ այժմ գրաքննիչի սեփական բարեհայեցողութիւնը անախորժ խօսակցութիւնների և յայտնութիւնների առիթ է լինում, այն ժամանակ ամեն օր պէտք է տեղան ամեն կողմից գանգատներ թէ ինչու այս կամ այն յօդուածը, որ մի թերթում երևացել է, չէ թոյլատրվում մէկի համար։

Այդպիսի թիւրիմացութիւններին վերջ կը դրվի, եթէ նախնական զրաքննութեան վերացումը կը դառնայ ընդհանուր մամուլի բոլոր օրգանների համար առանց որ և է խարութեան՝ վերաբերեալ հրատարակութեան տեղին կամ լեզուին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ռուսաստանի ֆինանսական դրութիւնը ներկայումս միջազգային ամենաուշագրաւ հարցերից մէկն է դարձել։ Պատերազմի դժբախտ ընթացքը դժուարացնում է արտասահմանում նոր փոխառութիւնների դիմելու գործը։ Ինչպէս յայտնի է, Մուկդէնի ճակատամարտից յետոյ Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիան անգամ չուզեց նոր փոխառութիւն իրագործել իր դրամական հրապարակում։ Արտասահմանեան մամուլը քննում է ռուսական ֆինանսների դրութիւնը և համարեա միահամուռ գտնում է, որ թէ և Ռուսաստանը պարքեր շատ ունի, բայց շատ հարուստ երկիր է և կարող է դուրս գալ ներկայ դժուար դրութիւնից, եթէ ներքին լայն վերանորոգումներ իրականացնէ։ «Русскія Вѣд. լրագրի թղթակիցը Լօնդօնից հետևեալ նմուշն է տալիս, թէ ինչպէս է վերաբերվում անգլիական մամուլը դէպի մեզ հետաքրքրող հարցը (խօսքը այն յօդուածի մասին է, որ գրել է մի մատնագէտ ֆինանսիստ «Times» լրագրի մէջ)։

Ֆինանսների մինիստրի ասելով, Ռուսաստանի պետական պարտքը այժմ հասնում է 750 միլիոն ֆունտ ստերլինգի (մօտ 7500 միլիոն ռուբլի։ Նա չէ կարող վճարել այդ պարտքը։ Ոչ ոք չէ էլ մտածում չափել նրա կարողութիւնը՝ ամբողջ պետական պարտքը վճարելու ընդունակութեամբ։ Կայ միայն այս հարցը՝ կարող է Ռուսաստանը վճարել իր պարտքերի տոկոսները։ Մեզ, անգլիացիներիս,—շարունակում է յօդուածագիրը—կարող են ասել թէ մեր պետական պարտքն էլ շատ մեծ է և մենք չենք վճարում այդ պարտքը։ Սակայն էական զանազանութիւնն այն է, որ Բրիտանիայի պետական պարտքի թղթերը գտնվում են անգլիացիների ձեռքում, մինչդեռ Ռուսաստանը գլխաւորապէս պարտական է օտարերկրացի պարտատէրերի։ Անգլիական կառավարութիւնը պարտական է իր սեփական ժողովրդին, իսկ ռուսաց կառավարութիւնը—օտարներին։ Այս վերջիններիս ձեռքում գտնվում են նաև մեծ քանակութեամբ ակցիաներ։ Եւ որովհետև այդ ակցիաներից շատերը երաշխաւորված են ռուս կառավարութեան կողմից, ուստի դրանք էլ կազմում են պետական պարտք։ Ամբողջ պետական պարտքը 750 միլիոն ֆունտ ստերլինգի չափը չունի. Ռուսաստանը իր պարտաւորութիւններով պիտի վճարէ միայն տոկոսները 32 միլիոն ֆունտ ստերլինգ (320 միլիոն ռուբլի) տարին։ Մատնացոյց են անում որ Ռուսաստանը միշտ վճարել է տոկոսները։ Մի յայտնի չափով դա ճիշտ է, թէ և դեռ պէտք է ապացուցանել թէ այդ վճարումները կատարվում էին պետական եկամուտներից։ Ռուսաստանը միշտ վճարում էր, բայց միշտ էլ փոխառութիւններ էր անում, որ տայ վճարումները։ Հարցը այժմ այն չէ թէ ինչ էր անում Ռուսաստանը, երբ կարողանում էր փող գտնել, այլ այն թէ ինչ պիտի նա անէ, եթէ օտար երկրացիները այլ ևս նրան փող չը տան։ Տարաբախտաբար, կարելի է երկիւղ կրել, որ առանց նոր փոխառութիւնների Ռուսաստանը չի ունենայ կարողութիւն վճարելու իր պարտաթղթերը։ Պարտք վերցրած փողերի միակ արդիւնաւէտ գործածութիւնը երկաթուղիներ շինելն է. բայց երկաթուղիները, ֆինանսների նախկին մինիստրի ասելով, արդիւնք չեն բերում։ Հեղինակը յետոյ նմանեցնում է Ռուսաստանը մի գործարանատիրոջ, որ ծախսում է հիմնական դրամագլուխը։ Նրա կարծիքով, Ռուսաստանի միջոցները մեծ են, համարեա անսահմանելի, բայց նրանք դուրս կը հրաւիրվեն միայն այն ժամանակ, երբ նոր ըէժիմ կը հաստատվի։ Բիւրոկրատիան սպանել է ազգաբնակութեան նախաձեռնութիւնը և այնպէս խառնել, շփոթել է երկրի ֆինանսները, որ երբ մտցնվի հասարակական ձայնի վերահսկողութեան վրա հիմնական նոր կարգը, (ինչպէս նա կայ ամբողջ կուլտուրական աշխարհում), այն ժամանակ հարկաւոր կը լինեն շատ տարիներ՝ նրանց կարգաւորելու համար։ Իսկ եթէ կը մնայ հին կարգը, հեղինակը մտիկ ապագայում նախատեսնում է ֆինանսական վիթխարի սնանկութիւն, որից սաստիկ կը ցնցվեն Ռուսաստանի օտարերկրացի պարտատէրերը։

Այսպէս են դատում արտասահմանում։ Հարց է—որքան մօտ է այդ պատկերը ճշմարտութեան։ Ռուս լրագրի թղթակիցը աւելացնում է իր կողմից.

Գուցէ օտարները մի քիչ խտացնում են գոյները, բայց այս բոլոր յօդուածները վերկայում են, որ դրութիւնը լուրջ է։

*

Մարտի 20-ից Թիֆլիսում սկսեց հրատարակվել «Кавказскій Край» անունով նոր պատկերազարդ շաբաթաթերթը՝ Բ. Էսաձէի խմբագրութեամբ։ Որքան կարելի է նկատել առաջին համարից, շաբաթաթերթի ուղղութիւնը շատ համակրելի է։ Մնում է տեսնել թէ ինչպէս նա կարդարացնէ իր անունը—«Կովկասեան երկիր», այսինքն՝ կը կարողանայ համաչափութեամբ ներկայացնել ամբողջ Կովկասը թէ ոչ։ Մեր կարծիքը յայտնելը թողնում ենք, որ մի քանի համարներ էլ հրատարակվեն, մանաւանդ որ առաջին համարը բաւական միակողմանի է երևում։

ԵԱՊՕՆԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՎՐԱ

Խաղաղութեան հարցի մասին անգլօ-ամերիկեան մամուլի հայեացքը առաջ բերելուց յետոյ, հետաքրքիր էր այժմ քննել թէ եապօնական յաղթանակները ինչ ազդեցութիւն են գործում Արևելքի ժողովուրդների վրա, ինչ յոյսեր են ծնեցնում նրանց մէջ։ Սա այն վերջովին հարցն է, որ Եւրոպան կոչում է «դեղին վտանգ» Հնդկաստանի։ «Buddism» լրագիրը, որ արևելեան աշխարհի գլխաւոր օրգաններից մէկն է, յայտարարում է, որ «դեղին վտանգը» անմիտ վախի ծնունդ է միայն։ Բայց, այնուամենայնիւ, անգլիախօս լրագիրը ընդունում է, որ Հեռաւոր-Արևելքի պաշտպանութեան հարցը ասիական ժողովուրդների ուշադրութեան գլխաւոր առարկաներից մինն է կազմում, և հաւանական է, որ ապագայում, վերոյիշեալ ժողովուրդները դաշն կապեն այդ մի և նոյն նպատակով։ Այդ դաշնը, «Buddism»-ի կարծիքով, ոչ միայն անհաւատալի չէ, այլ մինչև անգամ շատ ցանկալի է Ասիայի ապառնոլութեան համար։

«Արևմուտքը, ասում է Բուդդիզմը, իր նրաճողական քաղաքականութեան մէջ, յենվում է այն վարդապետութեան վրա, թէ ապրելու իրաւունք ունեն այն ժողովուրդները միայն, որոնք աւելի օժտված են, այն ցեղերը միայն, որոնք աւելի ուժեղ են։ Բայց Արևմուտքը չէ մտածում, թէ աշխարհը այնքան ընդարձակ է, որ մարդկային ընտանիքի երկու մեծ ճիւղերը, ասիական և մոնգոլական ցեղերը կարող են իրանց սեփական միջավայրում զարգանալ»։

Եւ այս ուղղութեամբ մի շարք պատճառաբանութիւններից յետոյ, Բուդդիզմը անում է հետևեալ յայտնութիւնները, որոնց կարևորութիւնը ակներև է։

«Զարմանալու ոչինչ չը կայ, եթէ մի քանի տարի յետոյ ռուս-եապօնական խաղաղութեան կնքումից, մի պաշտպանողական զինակցութիւն կազմվի Եապօնիայի, Չինաստանի և գուցէ Սիամի միջև։ Այդ դաշնակցութեան նպատակը կը լինի, ի հարկէ, ասիական պետութիւնները պաշտպանել Արևելքում, արևմտեան ազգերի ապագայ յարձակումների դէմ։ Դա կը լինի Մոնրոէի վարդապետութեան մի նոր գործադրութիւն Հեռաւոր-Արևելքի ժողովուրդների կողմից։ Եթէ նկատի առնենք այն քիչ ժամանակը, որը հարկաւոր եղաւ 40 միլիոն եապօնացիները արևմտեան մեթոդով կրթելու և պատրաստելու համար, կարելի է կարծել, որ 400 միլիոն չինացիները մի և նոյն օրինակին կը հետևեն, եթէ նրանց մէջ մուտք գործեն շուտով բարենորոգումները։ Այն ժամանակ կը կազմվէր մի երկպետեան կամ երեքպետեան բուդդայական դաշնակցութիւն, որը կը ստիպէր Արևմուտքի ազգերը յարգանքով վերաբերվել դէպի ասիական ժողովուրդները, Հեռաւոր Արևելքում չորոնել շահագործութեան հրապարակներ։ Արևմուտքի քաղաքագէտները, իրանց առաջ ցցված տեսնելով մի հզօր դաշնակցութիւն, կը չափաւորէին իրանց ախորժակները, կը հարկադրվէին հետևելու աւելի հաշտարար, իրաւարար քաղաքականութեան։ Գուցէ, եթէ ոչ կատարեալ, գոնէ մի մասնակի զինաթափութիւն տեղի կունենար և այդպիսով արևմուտքի ազգերը կը թեթևանային գաղութային այն ծանր հարկերից, որ այնքան սաստկապէս ճնշում է դրանց իւրաքանչիւրին»։

Ուրեմն Բուդդիզմի խօսքերից պարզ երևում է, որ բուդդայական դաշնակցութեան կազմութիւնը Արևելքի ցանկութիւններից մէկն է։ Եւ այդ դաշնակցութեան պարագլուխը, աւելորդ է ասել, կը լինի Եապօնիան։ Թէ ծագող-Արեգակի պետութեան յաղթանակները որ աստիճան հմայել են Հեռաւոր-Արևելքի ժողովուրդներին, այդ կարելի է նկատել այն պանեգիրիկից, որ հնչեցնում է Հնդկաստանի մի այլ օրգան «New India»։

«Եապօնիան, ասում Կալկաթայի օրգանը, ապացուցեց իր բարոյական գերազանցութիւնը արևմուտքի քաղաքակրթութիւնների վրա, և դրանով նա անսահման ծառայութիւն մատուցեց մարդկութեան։ Ասիական նկատումների արժէքը երևան բերելու համար, պէտք էր, որ մի ասիացի պետութիւն իր զինուորական կարողութիւնների և կորովի ապացոյցը տար։ Եապօնիայի բարոյական յաղթանակը ամբողջ ժամանակակից աշխարհի վրա, պէտք է գործէ ահագին ազդեցութիւն։ Ասիացի ժողովուրդները մինչև այժմ Եւրոպայի հետ դէմ դիմաց գալով՝ անկարող էին հանդիսացել դիմադրելու։ Նրանք չէին կարողացել յետ մղել Արևմուտքի արշաւանքները... Եւ այդ իրողութիւնը այն համոզմունքն էր առաջացրել Եւրոպայում և Ամերիկայում, այն տեսութիւնն էր ամրապնդել, թէ Ասիան բարոյապէս ստոր է կանգնած, քան Եւրոպան։ Արևմուտքը դեռ ևս չէ հրաժարվել այն յաւակնութիւնից, թէ իր քաղաքակրթութիւնը գերազանց է։ Եւ այդ յաւակնութեամբ էլ, նա յենված իր զէնքերի ուժի վրա, արշաւել էր Չինաստան և Արևելքի այլ մասերը։ Որքան ժամանակ, որ Ասիան չէր ապացուցել, թէ կարող է չափվել Եւրոպայի հետ ֆիզիկական և զինուորական զօրութեամբ, արևմտեան գերազանցութեան այդ տեսութիւնը սկսում էր ամրապնդվել նոյն իսկ Արևելքում»։

Ահա թէ ինչպէս են գնահատվում եապօնական յաղթութիւնները Ասիայի ժողովուրդների, մանաւանդ Հնդկաստանի բնակիչներից։ Բայց ուրախալի է դիտել, որ Արևելքի ազգերի հրճուանքի մէջ ոչինչ չը կայ սպառնալից և յարձակողական։ Նրանք ուրախանում են Եապօնիայի յաղթութիւնով, որովհետև այդ կոչված է ծառայելու խաղաղութեան և մարդկութեան դատին։

ԲԱԳՈՒԻ ԱՂԷՏԻ ԶՈՀԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Ներսիսեան դպրոցի Ի-ին դասատան աշակերտներից 2 ր. 41 կ., 2) Հաղբատ գիւղից Մ. Թանդիլեանի ձեռքով հաւաքած 4 ր. 60 կ., 3) Ս. Պետերբուրգի «Նադեժդա» ընկ. Ռաշտի գործակատութեան ծառայողներից Ստ. Աղամիրզեանի միջոցով առաջնորդական մանաժողովին յանձնելու համար 54 ր., 4) Թուրքէտից Ա. Մինասեանի ձեռքով հաւաքած առաջնորդ. մանաժ. յանձնելու համար 65 ր., 5) Բաթումի մի խումբ հայ ուսանողներից 7 ր. 75 կ., 6) Գէչրլու գիւղից Արմ. Մամիկոնեանի ձեռքով հաւաքած 5 ր. 43 կ., 7) Օրօճալար գիւղից, (Ախալքալաքի գաւառ) հոգեհանգստի ժամանակ Գ. Տէր-Ղևոնդեանի ձեռքով հաւաքած 11 ր. 50

կ., 8) Խարմանջուխ գիւղից տիկին Նախշուն Մինասեանի միջոցով 14 ր., 9) Բժ. Խ. Գ.-ից 5 ր., 10) Կատարին-Աւանի (Ն. Նախիջևանի գաւ.) հասարակութիւնից ուսուցիչ Ս. Մեսնիկեանի միջոցով 50 ր., 11) Բարֆրուշում եղած հայ երիտասարդութիւնից Ի. Տէր-Զաքարեանի միջոցով հաւաքած 70 ր., 12) Սլավեանակի հայերից Ա. Ազարեանի ձեռքով հանգանակած 75 ր., 13) Տիղ գիւղից (Զանգեզուրի գաւառ) հոգեհանգստի ժամանակ Նիկ. Տէր-Սահակեանի ձեռքով հանգանակած (առաջնորդական ժամաժողովին յանձնելու համար) 30 ր., 14) Աստրախանի հայ եկեղեցիների հոգևոր միաբանութիւնից Գէորգ քահ. Մկրտուչեանի միջոցով 26 ր., 15) Հին Զուղայի և Զուլֆայի (Երևան. նահ.) հայ հասարակութիւնից Գ. Աղաալեանի միջոցով 153 ր. 35 կ., 16) Կարգախից Գարեգին Ալթունեանի ձեռքով հանգանակած 24 ր., 17) Ղարասուբազարում բնակվող պանդուխտ և գաղթական տաճկահպատակ հայերից 65 ր. 15 կ., 18) Յ. քահ. Նախաշեանից (Ն. Նախիջևան) 1 ր., 19) Ուժանիսից (Զանգեզուրի գաւառ) Բ. Յովհաննիսեանի, Գ. Ահարոնեանի և Յ. Շահնազարեանի ձեռքով հանգանակած հոգեհանգստի ժամանակ 23 ր. 84 կ., 20) Ռինդ գիւղի (Շարուր-Դարալագեազի գաւառ) հասարակութիւնից 2 ր., 21) Այնազուր գիւղի (Շարուր-Դարալագ. գաւ.) հասարակութիւնից 7 ր., 22) Գօրիից Մեսրովբ Մարութեանի ձեռքով հանգանակած մի քանի անձերից 22 ր., 23) Գօրիի մի խումբ հայ օրիորդներից 3 ր., 24) Ախալքալաքից Թ. Բարեկենցի ձեռքով հանգանակած (առաջնորդական ժամաժողովին յանձնելու համար 25 ր. 40 կ., 25) Արփա գիւղից ուսուցիչ Գ. Յակոբեանի ձեռքով հաւաքած 5 ր. 60 կ., 26) Դաւալու գիւղից (Երևան. նահ.) միգասեան դպրոցի աշակերտներից 10 ր. 5 կ., 27) Խուտոր Սմօլենսկից (Կուբանի նահ.) Բիւզանդ Էհրամճեանի ձեռքով հաւաքած 5 ր. 50 կ. 28) Ղըզլարից Խաչ. քահ. Շաթիրեանի և Աւ. Յովհաննիսեանի ձեռքով հանգանակած (առաջն. ժամաժ. յանձնելու համար) 305 ր., 29) Սիմֆերօպոլի հայ կանանց բարեգործական խըմբակի ձեռքով հայ ժողովրդից հաւաքած 700 բուբլի։ Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 22,183 ր. 45 կոպէկ։

ՁԵԱՐ ԳԻՒՂՈՒՄ ՀՐԿԻԶՈՒԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք. 1) Երևանի մասնաւոր դպրոցում Գ. սարկ. Ալաբեանի միջոցով 5 ր. 30 կ., 2) Վ. Տ. Կիրակոսեանից (Նիժնի-Նովգորոդ) 5 ր., 3) տիկին Ն. Զուրաբեանից (Շուշի) 5 ր., 4) Մի պարոնից (Շուշի) 5 ր., 5) Գեֆեստ ընկերութեան (Բագու-Բայլով) 69 ր. 40 կ., 6) Զաւադ-բէգ Բալուղեանից (Արտավիր) 5 ր., 7) Կատարին-աւանի (Ն. Նախիջևան գաւ.) հասարակութիւնից ուսուցիչ Ս. Մեսնիկեանց միջոցով 50 ր., 8) Բալախանուց Բ. Յակոբեանի և ընկ. ծառայողներից հաւաքած 10 ր., 9) Թէոդոսիայից Ներսէս քահ. Հէրթեցեանի ձեռքով հանգանակած իշխանուհի Թումանեանին յանձնելու համար 41 ր. 15 կ., առաջնորդ Գարեգին սրբազանին յանձնելու համար 41 ր. 15 կ., 10) Յ. Թաթոսեանից (Էսսէնտուկի) 10 ր., 11) տիկին Մանուշակ Կիրթօվից (Էսսէնտուկի) 5 ր., 12) Խուտոր Սմօլենսկի (Կուբ. նահ.) Բիւզանդ Էհրամճեանի ձեռքով հանգանակած 5 ր. 50 կ., 13) Ղըզլարից Խաչ. քահ. Շաթիրեանի և Աւ. Յովհաննիսեանի ձեռքով հաւաքած 100 ր., 14) Մի ոմն 1 ր., 15) տիկին Օլգա Գալստեանից 1 ր., 16) տիկին Սոֆիա Զարիշելեանից 20կ.։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Մարտի 12-ին

Բաղուի անսպասելի և սրտաճմլիկ դէպքերը յուզեցին նաև հեռաւոր հիւսիսում ապրող հայ գաղութին։ Առաջին կկոտուր լուրերը, որոնք հաղորդեցին թուրք-հայկական կոտորածը, միանգամայն ապշեցուցիչ և անբացատրելի էին մեզ. միթէ, իրաւ, թուրքերը կոտորում են հայերին, չէ՞ որ ամբողջ դարեր է գլորվել, որի ընթացքում երկու ազգերի մէջ ազգայնական ատելութիւն չէ եղել։ Որտեղից ծագեց այդ արիւնալի դրաման. երազ չէ՞ արդեօք... Դժբաղդաբար երազ չէր, այլ դառն իրականութիւն։

Միմեանց հետևող սարսափելի լուրերը հաստատեցին իրողութիւնը, հաստատում էին և այն, որ այդ իրողութիւնը արդիւնք է ստոր որոգայթի, որը լարված է մի աներևոյթ ձեռքով։

Զգալով ամենախորին զզուանք դէպի այդ արիւնահոս դրամայի հեղինակը, միացնելով անկեղծ վշտակցութիւնը այդ դրամայի անմեղ զոհերի մեղաւորների հետ, անցեալ կիրակի էր, որ տեղիս գաղութը, ներկայութեամբ բազմաթիւ ռուս, վրացի և թուրք աղօթողների, տեղիս եկեղեցում պատարագ և հոգեհանգիստ կատարեց զոհերի յիշատակին։ Պատարագիչն էր թեմական առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսը, որը հիւր է մեզանում։ Պատարագից յետոյ Մեսրովբ վարդապետ Տէր-Մովսէսեանը կարճ և ազդու քարոզով ընդգծեց այն եղբայրական յարաբերութիւնը, որ գոյութիւն ունի երկու դրացի ազգերի մէջ և որ այդ «պատահական» ընդհարումը չի խախտի ապագայում ևս նոյն յարաբերութիւնը պահպանելու երկու դրացի ազգերի մէջ։

Երէկ ամսիս 10-ին, հայ և թուրք ուսանողների նախաձեռնութեամբ «Պավլովայի» դահլիճում տեղի ունեցաւ երեկոյթ Բաղուի անվեղ զոհերի ընտանիքների օգտին, առանց ազգութեան խտրութեան։ Մասնակցում էին յայտնի արտիստներ և արտիստուհիներ, չէին զլացել և իրանց մասնակցութիւնը ցուցաբերեցին Յ. Նալբանդեանը և երգիչ Ամիրջանը։

Ծրագրում կար և երգիչ Տ. Նալբանդեանի ազգանունը, բայց պարոնին բաղդ չունեցանք լսելու։ Ընդհանրապէս երեկոյթի ծրագիրը աղքատ էր և անբովանդակ. երկու անմիտ պիեսաներ, որ ներկայացվեցին ռուսաց լեզուով, կարելի էր փոխարինել աւելի հետաքրքիր նիւթերով։ Երեկոյթ, որի հասարակութիւնը աւելի հայ գաղութը պիտի լինէր, իր ծրագրում ոչ մի հայկական կտոր չունէր։ Յարգելի Ամիրջանն էր, որ հասարակութեան բուռն խնդիրքով ծրագրից դուրս երգեց «Այ վարդ» և «Ո՞ հինչ անուշ» հայերէն ռոմանսները, որ մեծ հաճոյք պատճառեցին։ Չէ՞ր կարելի արդեօք խմբական երգեցողութեան բաժին կալ ռուսերէն ռոմանսուորների հետ և հայերէն ռոմանսուորներ դնել։ Հասարակութիւնը ևս սպասածից աւելի քիչ էր. բացակայում էին և հայ գաղութից շատերը։

Երեկոյթի վերջում, ծրագրից դուրս, մի յայտնի ռուս և մի հայ ուսանող մի քանի խօսքերով շօշափեցին Բաղուի դէպքերը և հայ-թուրքական յարաբերութիւնները, բայց ոտիվանութիւնը ընդհատեց։

Ա. Մանուկեանց

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

—

Մարտի 18-ին

Ամսիս 15-ին ժամանեց այստեղ նոր նշանակված զինուորական գեներալ նահանգապետ Զամբակուբեան-Օրբելիանի, իսկ ամսիս 16-ին յայտարարվեց պատերազմական դրութիւն։ Առաւօտեան ժամի 8-ին զօրքերը սկսեցին անցնել փողոցներով՝ դրօշակներով և երաժշտութեամբ։ Զեռք առնվեցան պատերազմական դրութեան համապատասխան միջոցներ և քաղաքում խանգարված կարգը սկսեց վերահաստատվել։

Բայց մի անակնկալ դէպք դարձեալ սկսեց սարսափ տարածել և ահաբեկված ժողովուրդը նորից սկսեց ծակ ու ծուկ մտնել.—նոյն օրը ցերեկվայ ժամի 10-ին, երբ երկաթուղու կայարանի կառավարիչը կայարանից արքունական գանձարանն էր տանում 6,869 բուբլի, կայարանից մի երկու հարիւր քայլ հեռու չորս զինված աւազակներ յարձակվում են կառքի վրա, փողերը յափշտակում և անյայտանում։ Աւազակներին բռնելու համար բոլոր ձեռք առած միջոցները անօգուտ են անցնում։ Անցնում է ընդամենը երկու օր և նոյն այդ աւազակները այսօր, ամսիս 18-ին, ցերեկվայ 11 ժամին, յարձակվում են այժմ կայարանի կառավարչի օգնականի վրա մի և նոյն տեղում նրանից էլ խլում 6,444 բուբլի։

Դէպքը տեղի է ունենում այսպէս. կայարանի կառավարչի օգնականը կայարանի կասայից վերցնում է հաւաքված փողը, կայարանի ծառայի և մի ոստիկանի հետ նստում է քառը և դիմում դէպի արքունական գանձարանը։ Երեքն էլ ձեռքերին բռնած են ունենում ատրճանակներ։ Կայարանից փոքր ինչ հեռացած, յանկարծ, կարծես գետնի տակից յայտնվում են չորս զինված աւազակներ և բերդանի հրացանները ուղղելով կառքին՝ անմիջապէս կանգնեցնում են նրան։ Կառքում նստողները, չը նայելով որ ձեռքում ունենում են պատրաստի ատրճանակներ, անաբեկվում են և մնում են քարացած։ Աւազակները վերցնում են փողը և մտնելով դիմացի այգին՝ անհետանում։ Վայրկենապէս կօզակները շղթայում են քաղաքի չորս կողմը, բռնում են բոլոր ճանապարհները և սկսում են խիստ որոնել աւազակներին։ Բայց այս անգամ այդ յանդուգն աւազակները չը կարողացան ազատվել և ընկան որոգայթի մէջ։ Երկար որոնելուց յետոյ, վերջապէս աջողվում է աւազակներին գտնել նոյն այգու մէջ գտնվող մի ջրանցքի խողովակում։ Խողովակի ետևը ծածկված է լինում և աւազակները մնում են կարծես գուլպայի մէջ։

Անմիջապէս ոստիկանները կօզակների հետ բռնեցին խողովակի առաջը և աւազակները մէկ-մէկ դուրս եկան խողովակից, ցեխոտված, չանգռոտված։ Բոլորն էլ ոտից գլուխ զինված էին ատրճանակներով, բերդաններով և դաշոյններով. մէկի մօտ գտան 150 փամփուշտ։ Բոլորն էլ երիտասարդներ էին՝ 20—30 տարեկան։ Անմիջապէս եկաւ նահանգապետի օգնականը, ոստիկանապետը, քննիչը, պրոկուրորը և կայարանում քննելուց ու արձանագրութիւն կազմելուց յետոյ՝ աւազակներին խիստ հսկողութեան տակ ուղարկեցին բանտը։ Տարած փողից պակասել է 220 բուբլի։

Այստեղ բոլոր ուսումնարանները փակված են և շատ աշակերտներ արդէն քաղաքից հեռացել են։ Բնակիչները երկիւղի մէջ են մնում և յետոյ շատ քիչերն են փողոց դուրս գալիս, իսկ գիշերները ամուր փակվում են տներում։

Ս. Նազարեան

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Մարտի 13-ին

Հին-Նախիջևան քաղաքը Կովկասի քաղաքների մէջ մի առանձին տեղ է բռնում. բացի այն, որ այդտեղ Թուրք տարրը մեծամասնութիւն է կազմում, կան զօրեղ և հարուստ Թուրք խաներ, որոնք իրանց դիրքով և ազդեցութեամբ կառավարչական շրջանների վրա քաղաքին տալիս են այդ առանձնակի տեղը. ուստի յայտնի չէ «Նախիջևանի խաներ» պարբերութիւնը. ամբողջ այդ գաւառը ենթարկվում է դրանց. խաների խօսքը օրէնք է այդ շրջանում։ Սակայն դժբախտութիւնը այն է, որ դրանց ընտանիքների մէջ կրթվածները շատ քիչ են, առաջադիմող տարրը պակասում է այդտեղ. այդ է պատճառը, որ Նախիջևանը ընկած դրութեան մէջ է. քաղաքում ոչ մի մխիթարական երևոյթ չես գտնի։ Բացի կառավարչական, դատաստանական ատեաններից, պօստից, կլուբից և չորս ուսումնարանից, քաղաքը ուրիշ ոչինչ չունի։ Անմաքրութիւնը յաւիտենական բռնապետն է այդ քաղաքի, որը ցեխի մի կոյտ է ներկայանում. քարվանսարաներից մէկն այնպէս է լցվել ցեխով, որի մաքրելը կարող է տեղի ունենալ ամառը։ Մաքերի շփման, ինքնակրթութեան վայրեր բացակայելով բացակայում են. յիշեալ կլուբը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կամայականութեան, քմահաճոյքի բուն։

Այդ բոլորի պատճառը միայն Թուրք տարրը համարել. մեղք կը լինի. քաղաքում կայ և հայ տարր. թէ որքան հայերը պարտաճանաչ են դէպի իրանց քաղաքացիական պարտականութիւնները, երևում է դրանց ընտանեկան պարտականութիւնները կատարելուց։ Մատաղ սերունդի կրթութիւնը համարելով ընտանեկան առաջին պարտականութիւններից մէկը, ես իրաւունք ունեմ ասելու, որ Նախիջևանցին անտարբեր է դէպի այդ պարտականութիւնը. նրա աճող սերունդը չէ պատուաստվում, ինչպէս հարկն է։ Այստեղի քաղաքային դպրոցը ունի եօթ տարվայ դասընթաց, հետևապէս աշակերտը եօթ երկար ու ձիգ տարիներ սովորում է այդտեղ, սակայն շատ անգամ աւարտող աշակերտներից շատերը իրանց անունը անսխալ գրել չեն կարող։

Պատահական հարցումից երևաց, որ աշակերտներից շատերը հայոց լեզուի և կրօնի դասագիրք չունեն, չունեն և տետրակներ. չունեն, որովհետև պահանջող չը կայ. սա իրականութիւն է։ Այդ դպրոցի կրօնուսոյցը տեղիս Յակովբ քահանայ Տէր-Մինասեանն է. սա մի բազմարուեստ անձնաւորութիւն է. նախ ծխատէր քահանայ է, ապա հոգևոր կառավարութեան անդամ, քաղաքային դպրոցի կրօնուսոյց, մեղուաբոյծ, շերամապահ, գինեգործ և այլն և այլն. այս չափ զբաղմունքի տէրը անշուշտ ոչ ոյժ կունենայ և ոչ ժամանակ ուսուցչական գործի համար։ Միթէ՞ այս բոլորը յայտնի չէ Նախիջևանցուն, հային, աշակերտի հօրը. կասկած չը կայ, որ բոլորն էլ գիտեն այդ. սակայն լռում են, քար են դարձել. դաբաւոր ստրկութիւնը այնպէս է քամել Նախիջևանցու ներքին հոգեկան ու մտաւոր աշխարհը, որ նա բթացել ու անզգայ է դարձել ամեն մի տպաւորութեան նկատմամբ։ Կան հանգամանքներ, որ ստիպում են մարդու լռել. բայց միթէ Նախիջևանցին այնքան ոյժ էլ չունի, որ մի կերպ ցոյց տայ իր անբաւականութիւնը տէր հօրից, կամ այդ դպրոցում տիրող կարգից. եղել է այդպիսի ձգտում և անհետևանք մնացել. ոչ, ուրեմն ոմ է մեղաւոր—տէր հայրը, թէ Նախիջևանցի իրան կրթված համարողը։ Ասենք թէ տէր հայրը բռնել է մի ուրիշ ուղի ու գնում է, առանց զգալու իր անելիքը 10—15 տարվայ ընթացքում, (այդքան տարի նա ուսուցիչ է այդ դպրոցում) ապա մէկը չը պիտի լինի, որ զգացնել տայ նրան իր անելիքը։

Մենք ասում ենք. Տէր հայր, ինչ գործ ուզում էք սկսեցէք և կատարեցէք այնպէս, ինչպէս ձեր կամքն է, բայց դէպի ապագայ սերունդի կրթութիւնը երկիւղածութեամբ ու պատկառանքով վերաբերվեցէք. կրթական գործը նուրբ ու ծանրակշիռ մի լուծ է. նախ չափեցէք ձեր ոյժերը, ապա մօտեցէք դրան. եթէ ձեզ անհամապատասխան էք գտնում այդ պաշտօնին, անյապաղ հեռացէք, մանաւանդ որ նիւթականի կողմից շատ թէ քիչ ապահով էք. ինչու ուրեմն ապագայ սերունդի նախատինքին արժանանալ։

Իսկ Նախիջևանցի ինտելիգենտներին կասենք, որ իրանց անգործնէութիւնը վերագրել արտաքին հանգամանքներին, ինչպէս ասացինք, այնքան էլ արդարացի չէ. կան շրջաններ գործունէութեան, ուր «անկախ պատճառներ» քիչ են պատահում։ Այդտեղ պիտի երևայ ձեր ոյժը։

Ղարաբան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թեմիս սրբազան առաջնորդ Գարեգին եպ. Սաթունեանը կ. Պոլսի պատրիարքից ստացել է մի սրտառուչ գրութեան հետ 1712 բուբլի յօգուտ Բաղուի կարօտեալների։

—

Թիֆլիսի հայ ազգաբնակութեան բազմաթիւ ներկայացուցիչները հայ հոգևորականութեան ներկայացուցիչների հետ միասին երէկ, մարտի 22-ին, գնացին շիա մահմեդականների մզկիթը ներկայ լինելու Պարսկաստանում վախճանված Շէյխ-Հասան-Մամաղանցի մուշտէյիդի հոգեհանգստին։ Հոգևորականութեան կողմից գնացել էին Բենիկ վարդապետ, Երզնկեան, Յով. Ամիրխանեան և Բաբաքեօվխան քահանաները։ Վարդապետը խօսեց ցաւակցական մի ճառ դրացի ազգաբնակութեան սուգի պատճառով։ Հոգեհանգիստը տեղի ունեցաւ ժամի 11—11½-ին։

—

Կովկասում փոխարքայ նշանակվելով, փոփոխութեան է ենթարկվում և կառավարչապետի խորհուրդը. նրա իրաւասութիւնը լայնանում է և անդամների թիւը աւելանում զանազան վարչութիւնների ներկայացուցիչներով։ Փոփոխութիւնների են ենթարկվելու նաև գաւառական ոստիկանութեան պետերի վարչութիւնները, որոնք այժմ Կովկասի համար ուտիչ վէրքեր են կազմում։ (Б. В.)

—

Մարտի 20-ին կայացաւ Թիֆլիսի երդուեալ հաւատարմատարների և նրանց օգնականների արտակարգ ընդհանուր ժողովը՝ Պետերբուրգում մարտի 28-ին գումարվող փաստաբանական համաժողովին պատգամաւորութիւն ուղարկելու համար։ Ժողովը, որին ներկայ էին աւելի քան վաթսուն փաստաբաններ, նախագահ ընտրեց երդուեալ հաւատարմատար Ս. Վ. Զեմեսօվին և քարտուղար՝ երդուեալ հաւատարմատար Տիգրան Յովհաննիսեանին և հետևեալ որոշումը կայացրեց. «Պահանջել, 1) որ Բուլիգինի յանձնաժողովը զբաղվի միմիայն սահմանադիր ժողովի գումարման օրէնքը մշակելով՝ ընդհանուր, հաւասար, անմիջական և գաղտնի քուէարկութեան սկզբունքով. 2) որ այդ յանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու հրաւիրվեն Ռուսաստանի բոլոր ազգութիւններից ազատ կերպով ընտրված ներկայացուցիչներ, և 3) որ նախօրօք և անմիջապէս վերացվի սաստկացրած պահպանութեան դրութիւնը, ազատութիւն տրվի մամուլի, խօսքի և ժողովների, ապահովվի անձնաւորութեան և բնակարանի անձեռնմխելիութիւնը և ազատութիւն ստանան և վերադարձվեն քաղաքական և կրօնական յանցանքների համար ձերբակալվածները և աքսորվածները։ Այնուհետև ժողովը պատգամաւոր ընտրեց երդուեալ հաւատարմատարներ՝ Սոկրատ Մէլիք-Ադամեանին, Ս. Վ. Զեմեսօվին, Տիգրան Յովհաննիսեանին, Լ. Ա. Խամենտօվսկուն ու երդ. հաւատարմատարի օգնական Ն. Զ. Էլիսվային և անձնափոխանորդ՝ երդուեալ հաւատարմատար Եսայի Դոլուխանեանին։ Ի. Ի. Զուրաբաշվիլի, որը բազմաթիւ տոմսերով առաջարկվեց իբրև պատգամաւորացու, քուէարկութիւնից հրաժարվեց, յայտնելով, որ մարտի վերջին անկարող է բացակայել Թիֆլիսից։

—

Անդրկովկասեան Մուֆտի Գաիբովը դիմել է Կովկասի կառավարչապետի օգնականին և խնդրել, որ իրան թոյլ տրվի վերաքննութիւն կատարել Անդրկովկասում։ Որովհետև յարգելի Մուֆտին շատ սիրված ու յարգված է իր հօտից, այդ պատճառով ցանկալի կը լինէր նրա վերաքննական պտոյտը Կովկասում, այն պատճառով, որ պատկառելի ծերունին խաղաղութեան կողմնակից լինելուց զատ, պաշտպան է նաև կարգ ու կանոն մտցնելու մահմեդականների մետրիքականների և այլ կրօնական գործերի մէջ։

—

Պետերբուրգից հեռագրում են «Н. О.»-ին մարտի 20-ին. «Մարիա Կայսրուհու դպրոցական հաստատութիւններում հայերին կրօնը, բացի աղօթքներից, ռուսերէն լեզուով անցնելու կարգադրութիւնը ոչնչացված է, որովհետև ընդհանուր հարց է յարուցված այլադաւաններին կրօնն անցնելու մասին»։

—

Քարթալինայի գիւղերից հաւաքված քահանաները դիմել են Վրաստանի էկզարխին և խնդրել, որ ընդհանուր ժողով նշանակէ թեմական հոգևորականների համար, քննելու ժամանակի առաջ քաշած հարցերը։

—

Սուխումում տեղական ամբոխը փորձեց մարտի 20-ին իր սեփական դատաստանով դատելու մի գողի։ Բայց ստրաժնիկները ցրեցին ամբոխը, իսկ յանցաւորին յանձնեցին դատաստանին։

—

Շուշու ձայնաւորները մի մասնաւոր խորհրդակցութեան մէջ որոշել են ներքին գործերի մինիստրութեանը խնդրել հեռագրով, որ իրանց քաղաքին էլ թոյլ տան ունենալ ներկայացուցիչներ Բուլիգինի յանձնաժողովում։

—

Թբվիբուլիից հեռագրում են «Н. О.»-ին մարտի 21-ին. «Այսօր, ժամը 11-ին, մի խումբ զինված չարագործներ յարձակվեցին արտելշչիկի վրա, որ բանուորներին օրավարձ էր վճարում։ Կողոպտեցին մօտ 8,000 ր.։ Ծանր վէրք հասցրին պահապան Զապիօվին և փախան»։

—

Ասխաբադի արտիլէրիական պահեստը կարգադրութիւն է ստացել, որ 50 հատ հրացան և բաւական թւով փամփուշտներ տրվի բաժանելու Կօչանի նահանգապետութեան շրջանում ապրող քրիստոնեայ ռուսահպատակներին, որպէս զի նրանք միջոց ունենան իրանց անձը պաշտպանելու, եթէ այնտեղ որ և է շարժում տեղի ունենայ ընդհանրապէս օտարերկրեայ քրիստոնեաների դէմ։ (З. О.)

—

«Пр. Кр.» լրագիրը հաղորդում է, որ Կուզմինսկու սէնատորական վերաքննութեան խումբը Պետերբուրգից մարտի 25-ին կը մեկնի Բագու։

—

Թիֆլիսի առևտրական բանկի ծառայողները բանկի վարչութեանը ներկայացրին իրանց պահանջները, որոնցից գլխաւորները սրանք են. ծառայողների ռոճիկներն աւելացնել 3 տարին մի անգամ՝ որոշ չափով, երեկոյեան զբաղմունքների համար յատուկ վճար տալ և ամառվայ ընթացքում արձակուրդներ տալ հերթով։—Այդ պահանջների խոնարհ չափաւորութիւնը հասկանալու համար, պէտք է մի քիչ ծանօթ լինել այն ստրկական աշխատանքի և դրութեան հետ, որին դատապարտված են այդ հարուստ հիմնարկութեան աղքատ ծառայողները։

—

Քութայիսից հեռագրում են «Н. О.»-ին մարտի 21-ին. «Ժամը 12-ին մի քանի աւազակներ վիճակային դիւանատան մօտ յարձակվեցին հոգևոր վարժարանի վերակացու Կօբախիձէի վրա, որ տանում էր ուսուցիչների ռոճիկը, և կողոպտեցին 1,800 ռուբլի։ Գողերից 2-ին սպանեցին, 2-ին վիրաւորեցին, 2-ին ձերբակալեցին։

—

Մայրաքաղաքի հոգևորականութիւնն անվաս չէ մնացել ներկայ առաջդիմական շարժումից։ «Б. В.» լրագիրը լսել է, որ մի խումբ հոգևորականներ այժմ ստորագրութիւն են հաւաքում, որ դիմեն պատշաճաւոր իշխանութեան և խնդրեն հնար եղածին չափ փութով իրագործել փետրվարի 18-ի ըսկզբիպտի խոստացած բարենորոգումները։

—

Թիֆլիսի նահանգապետը հետևեալ շրջաբերականն է ուղարկել իր նահանգի գաւառապետներին. «Իմ ունեցած փաստերից երևում է, որ շատ յաճախ գիւղացիների մէջ խառնակութիւններ ծագում են ոստիկանութեան և ուրիշ վարչութիւնների պաշտօնեաների աուրիշ վարչութիւնների պատճառով դէպի այդ դասակարգի գործերը։ Շատ դէպքերում գիւղական համայնքներին, նոյնպէս և առանձին անհատներին, որոնք անհամբեր սպասում են պատճառաբանված պատասխանի իրանց խնդիրներին, յայտարարվում են միայն արդիւնքները, առանց բացատրութեան և պատճառաբանութեան։ Այդպիսի յայտարարութիւնները չեն կարող գոհացնել ընդհանրապէս գիւղացիներին և, մասնաւորապէս, գիւղական համայնքներին։ Ոչ—ցանկալի հետևանքներից խուսափելու համար՝ խստիւ պատուիրում եմ. նախ՝ որ գիւղական համայնքների և անհատների տուած խնդիրների պատասխանները տրվեն անմիջապէս շահագրգռված անձերին կամ նրանց հաւատարմատարներին, ստորագրութիւն առնելով նրանցից, գործի էութիւնը պարզելով նրանց. երկրորդ՝ որ այդ պատասխանները պարզաբանվեն գիւղական ժողովներում. երրորդ՝ որ այդ բոլոր վճիռները կախվեն նաև գիւղական դիւանատներում»։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Տեղիս խանութպանները մի անել դրութեան մէջ են. այս ձմեռվայ ընթացքում շաբաթ չէր անցնում, որ խանութ չը կողոպտվէր. ժողովուրդը լաւ էլ ճանաչում է, թէ ովքեր են կողոպտողները, բայց ինչ կարելի անել, որ այդ գողերը մի սովորութիւն ունեն—ապրանքը գողանալ առանց վկաների ներկայութեան, իսկ գողացած ապրանքն էլ մի յուսալի տեղ պահելով առժամանակ, յաջողացնում են խոյս տալ արժանի պատժից։ Մինչև փետրվարի վերջերը գողացված ապրանքների քանակութիւնը հասնում էր մօտ 4000 ռուբլու, իսկ նորերս գողացան գիւղիս կենտրոնում գտնված մի մանուֆակտուրային խանութի բոլոր ապրանքը, մօտաւորապէս 300 ռուբլի գումարի։ Այդ խանութը պատկանում էր մի հրէայի. ուստի տեղիս երիտասարդներն աշխատեցին հաւաքելով և խնդրելով գողացած ապրանքի մեծ մասը տիրոջը վերադարձնել տալ, որպէսզի այդ գողութիւնն անախորժ գոյն չը ստանայ։ Հետաքրքիր է, որ այդ խմբի անդամների մի քանիսը արհեստաւորներ են. օրինակ երկաթագործ, հիւսն, որոնք իրանց արհեստով կարող էին պարապել, փոխանակ փակ դռներ բացանելու ձևերը կատարելագործելու։ Այս արհեստաւորների այդ գողութեան խմբի պարագլուխ լինելն ապացուցանում է, որ այստեղ տնտեսական պատճառներ չը կան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Վլադիվոստոկում։ «New-York Herald» լրագրի Վլադիվոստոկից ստացած տեղեկութիւնների համեմատ, նրա բնակիչները գարունքից սպասում են պաշարման և առաջուց հեռանում են քաղաքից, իսկ նրանք, որոնք չեն կարող մնալ, դուրս են տանում արժէքաւոր գոյքերը։ Ամեն բանի գինը բարձրացել է, թէպէտ տաւար և ամեն տեսակ մթերքներ ամեն օր բերում են երկաթուղով։ Ծովից ոչինչ չէ բերվում. ոչ մի շոգենաւ չէ կարող պատռել եապոնական պաշարման գիծը։ Նաւաշինարաններում արդէն մի ամիս առաջ աշխատանքները դադարած են, որովհետև նաւերի նորոգութիւնը աւարտված է։ Նաւահանգիստը ամրացնելու աշխատանքները ծածկված են դիտամբ այդ նպատակով տնկված ծառերի շարքերի ետևը։ Նոյն սիստեմն է ընդունված և այն կղզիները ամրացնելու համար, որոնք տիրապետում են նաւակայանի վրա։ Քաղաքը պատերազմական դրութեան մէջ է յայտարարված և նրա մէջ 1000 մարդ բերդապահ զօրքը, զետեղված է զօրանոցներում, իսկ 25,000 մարդիկ ցրված են մարտկոցներում, բացի դրանից, ամեն օր գալիս են օժանդակ զօրքեր։ Հաւատացնում են, որ ընդամենը քաղաքում արդէն մինչև 80,000 զօրք կայ։ Եապոնացիների գլխաւոր բանակը գտնվում է Սօնչինում, որտեղից գեներալ Կաւամուրա մի զօրեղ զօրաբաժին ուղարկեց դէպի Եալուի աղբիւրը՝ ռուսների արշաւան առաջն առնելու համար այդ ուղղութեամբ։ Այդպիսով եապոնական զօրքը համարեա առանց որ և է ջանքի տիրապետութիւն ձեռք բերեց Կօրէայի հիւսիս-արևելքում։ Պէտք է նկատել, որ այդ բոլոր տեղեկութիւնները բերել է պօստը, որ դուրս է եկել Վլադիվոստոկից մի ամիս առաջ։ (Новости)

Լուրեր խաղաղութեան մասին։ Խաղաղութեան վերաբերեալ լուրերը յամառութեամբ կրկնվում են, չը նայելով նոյնպիսի յամառ հերքումներին։ Բոլոր կառավարութիւնները հրաժարվում են իրանց վերագրված դիտաւորութիւնից՝ միջնորդ հանդիսանալ թշնամի կողմերի հաշտութեան գործում, սակայն Էդուարդ թագաւորի շուտով Կոպենհագէն ժամանելու փաստը պաշտօնապէս հաստատվում է և ակամայ մտածել է տալիս կողմնակի միջնորդութեան մասին։ Լուր է պտտում, որ Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան և Միացեալ-Նահանգները աշխատում են ազդել Եապոնիայի վրա՝ նրա պահանջները չափաւորելու դիտաւորութեամբ։ (Нов.)

Դաշնակցութիւն Եապոնիայի հետ։ Վերջերս անգլիական և եապոնական լրագիրներում երևացին մի շարք յօդուածներ անգլո-եապոնական յարաբերութիւնների և դաշնակցութիւնը վերանորոգելու մասին, որի ժամանակամիջոցը պէտք է լրանայ երկու տարուց յետոյ։ Եապոնական ազդեցիկ լրագիրների մեծ մասը ասում է, որ այդ դաշնակցութիւնը ոչ միայն պէտք է վերսկսվի, այլ պէտք է ընդարձակվի և նրա մէջ պէտք է մտցնել պարտաւորութիւն, որ իւրաքանչիւրը դրանցից պէտք է օգնութիւն հասցնէ իր դաշնակցին պատերազմի դէպքում։ Որպէս յայտնի է, դաշնակցութեան այժմեան պայմանները նախատեսում են այդպիսի օգնութիւն միայն այն դէպքում, երբ միաժամանակ պատերազմ է մղվում երկու պետութեան դէմ։ «Times» լրագիրը ամբողջապէս միանում է այդ ծրագրին, ասելով թէ այդ ծրագրի իրագործումը խաղաղութեան հաստատ գրաւական կը դառնար Ասիայում։ «Ոչ մի պետութիւն, ասում է լրագիրը, պետութիւնների ոչ մի համախմբում չէ կարող կուել բրիտանական նաւատորմի և եապոնական զօրքի միացեալ ոյժերի հետ։ Առ միշտ անզօրութեան մատնված կը լինեն ամեն տեսակ սպառնալիքներ Չինաստանի, Հնդկաստանի, Աւղանստանի, Պարսկաստանի հասցէին, ընդմիշտ բաց կը պահվեն Չինաստանի դռները միջազգային առևտրի համար»։ Դաշնակցութիւնը, լրագրի կարծիքով, պէտք է հիմնվի նոյն սկզբունքների վրա, ինչ սկզբունքների վրա որ հիմված է ֆրանս-ռուսական դաշնակցութիւնը, մի բացառութեամբ միայն, որ իւրաքանչիւր երրորդ պետութիւն կարող է մտնել դրա մէջ, ընդունելով դաշնագրի հիմնական պայմանները։ (Сынъ Отечес.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Լինեվիչի հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեանը 1905 թուի մարտի 20-ին. «Բանակներում գիշերն անցաւ առանց փոփոխութեան։ Մեր ծայրագոյն ձախ թևում մարտի լոյս 15-ի գիշերը մեր խուզարկուները պօղեսաւոր էկսի և պօղպօրուչիկ Տրօցկու առաջնորդութեամբ Բայշանչժի գիւղում շրջապատեցին եապոնական մի պահակ՝ 6 դրագունից բաղկացած։ Նրանցից 5 ին սպանեցին և մի վախմիստրի գերի վերցրին»։

ՄՕՍԿՎԱ։ Բացվող խօլերային համաժողովին գրվել են 1000 մարդ։ Ստորագրութիւնը շարունակվում է։

ՐԻԳԱ։ Մակսիմ Գորկին մեկնեց Մօսկվա։

ԼՕԴԶ։ Պօզնանսկու ակցիօներական ընկերութեան գործարանում բանուորները վերսկսեցին աշխատանքները։

ԱՍԽԱԲԱԴ։ Մէշէդից և Քուչանից փախած ռուսահպատակ ընտանիքները վերադառնում են։ Պարսկական իշխանութիւնը զսպեց ապստամբութիւնը։

ԲԵՐԼԻՆ։ Գրինց Հայնրիխն ամուսնու հետ մեկնեց Պետերբուրգ։—Հարաւ-արևմտեան Աֆրիկայում նոր կռիւներ են եղել։ Գերմանացիներից սպանվել են 1 օֆիցէր և 7 զինուոր։

ԴԱՆՑԻԳ։ Հիմքից այրվեց Կվալիտէի մեծ նաւաշինարանը։ Վնասն ահագին է։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 21 մարտի։ Վաղը կայանալու է պատգամաւորների պաշտօնական նիստ, որից յետոյ նստաշրջանը կը փակվի մինչև կրիզիսի վախճանը։

ԱԹԷՆՔ։ Վիլհէլմ կայսրը Կօրֆու կը ժամանէ մարտի 28-ին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը հերքում է Տանժէրից և Բերլինից եկած լուրը, որ իբր թէ Միացեալ-Նահանգները Գերմանիայի հետ նոր համաձայնութիւն է կայացրել Մարոկկոյի վերաբերութեամբ։

ՄԱԴՐԻԴ։ Թագաւորի ուղևորութեան ծրագիրը Հոսմ՝ պաշտօնապէս հերքվում է։

ՏՕԿԻՕ, 21 մարտի։ (Բերլինի վրայով)։ Համաձայն այսօր ստացված պաշտօնական հաղորդագրութեան, եապոնական զօրքերի մի մասը դուրս քշեց ռուսներին Մեանխացզէից և մարտի 18-ին գրաւեց այդ գիւղը և նրա հիւսիսի բարձունքները։ Միւս կողմերում փոփոխութիւններ չը կան։

ՄՕՍԿՎԱ։ Փոխառութեան ստորագրութիւնը Մօսկվայում հասել է 50,000,000-ի։

ՕԴԵՍՍԱ։ «Լազարեվ» շոգենաւով ժամանեց Պօրտ-արտուրցիների 11-դ խումբը—39 հոգի, նոյնպէս և 24 նաւաստի զինուորական նաւերից, որ գնում էին Մադագասկար։

ՏՕՄՍԿ։ Գործակատարների ընդհանուր ժողովը, ի նկատի առնելով աշխատանքի օրէնսդրական կանոնաւորման հարցի մշակումը և տէրերի ու գործակատարների յարաբերութիւնների կանոնաւորումը, որոշեց հեռագրով խնդրել Ֆինանսների մինիստրին՝ այդ հարցերի մշակման ժամանակ թոյլատրել ժամանակելու Տօմսկի գործակատարների ընկերութեան ներկայացուցչին։

ԹԱՒՐԻԶ. (սեփ. թղթ.) Երէկ անստորագիր նամակներ էին ցրում, նպատակ ունենալով գրգռել տեղացիներին հայերի դէմ։ Նամակները խլել է ոստիկանապետը։

ՄՕՍԿՎԱ։ Աքսորի դատապարտվածներն առ այժմ կուղարկվեն Տօբոլի նահանգը, որ իբր աքսորման ամենահեռաւոր վայր է առ այժմ։

ԲԵԼՕՍՏՕԿ։ Մի քանի խոշոր գործարանատէրեր, անհնար համարելով ներկայ պայմաններում շարունակել արդիւնաբերութիւնը և բանուորների պահանջները լրացնելն էլ անկարելի գտնելով, նշանակեցին օրէնքի պահանջած 2 շաբաթ ժամանակամիջոցը, որից յետոյ գործարանները պէտք է փակեն։

ՏՎԵՐ։ Տվերի նահանգը յայտարարված է իբր խօլերայից վտանգված։

ԲԱԳՈՒ, 20 մարտի։ Նկատված է մի կասկածելի մահվան դէպք. կարծում են թէ խօլերա է։ Կատարվում է բակտէրէօլոգիական հետազօտութիւն։ Քաղաքը ոչ մի միջոցի չէ ձեռնարկում նաւթական միջոցների սղութեան պատճառով։

ՎԱՐՇԱՒԱ, 21 մարտի։ Երէկ երեկոյեան նախնական բանտի մօտ, Դիկի փողոցում հաւաքվեց հրէաների մի ամբոխ, 1000-ից աւելի մարդ, հրէա-բանդարկեալի յուղարկաւորութեան առիթով։ Երբ պահակախումբը պահանջեց ցրվել, ամբոխի միջից լսվեց հրազէնի պայթիւն, որը վնաս չը պատճառեց. այն ժամանակ պահակն սկսեց կրակել. ամբոխից 2 մարդ սպանվեց և 5 հոգի վիրաւորվեց։

22 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նիդերլանդական թագուհու մօտ արտակարգ դեսպան Ստրուվէն պաշտօնից արձակված է համաձայն իր խնդրի, հիւանդութեան պատճառով։—Բոլգարիայի դիպլոմատիական գործակալ Բախմետեվին հրամայված է անձնականապէս օգտվել արտակարգ դեսպան և լիազօր մինիստր կոչումով։—Վարշավայի գեներալ-նահանգապետի դիւանի դիրեկտոր Մենկինին հրամայված է լինել Լիբլինի նահանգապետ։—Սէնատոր գաղտնի խորհրդական Տրեպօվին շնորհված է շտալմայստերութիւն, թողնելով սէնատոր։

ՄՕԳԻԼԵՕՎ, 21 մարտի։ Երէկ երեկոյեան ժամը 10 ին Վիլենսկի փողոցով անցնող ոստիկանապետի օգնական Միզգայլօի վրա ռումբ չարամիտներ իրար ետևից 3 անգամ կը-բակ արին։ Առաջին հրաձգութիւնից յետոյ ձիերը փախցրին կառքը։ Գնդակները չը կը-պան։ Չարամիտները փախան ազատվեցին։

ՄԻՆՍԿ, 21 մարտի։ Լիբաւա-Ռոմէնսկի գծի վրա ապրանքատար գնացքներն ընդհարվեցին։ 10 վագոն ջարդվել են և 6 վնասվել։ Գնացքի բոլոր ծառայողները վիրաւորված են. նրանց ուղարկեցին Հօմէլի հիւանդանոցը։ Ընդհարման պատճառն այն է, որ գնացքն աւելի շուտ են ճանապարհ դրել, քան ուղիի ազատ լինելու մասին հեռագիր ստանալը։

ԼՕՆԴՕՆ։ Անգլիական թագաւորը ամառը կը գնայ Մարիէնբադ բժշկվելու։ Մի և նոյն ժամանակն այնտեղ կը գնայ և Պօրտուգալական թագաւորը։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ 21 մարտի։ Անդրաշին երկար ունկնդրութիւն ունեցաւ կայսրի մօտ, որը նրան յանձնեց բանակցել դիմադրական պարագլուխների հետ։ Անդրաշին խորհրդակցեց նրանց հետ։ Կայսրը պատրաստ է երկու տարով յետաձգելու զինուորական նախագիծը։ Դիմադրական պարագլուխները միաձայն որոշե-

ցին չը բաւականանալ կայսրի արած զիջումովը։

ՄՕՍԿՎԱ, 21 մարտի։ Կուրսկի երկաթուղու շարժման պետ Զիւբենկօի վրա ատրճանակ արձակեց նոյն ուղիի աւագ ինժենէր Կալաշնիկովը, որ յետոյ իր վրա կրակ բացեց։ Զիւբենկօն և Կալաշնիկօն անվնաս մնացին։ Սպանութեան փորձի պատճառը պաշտօնին վերաբերող թիւրիմացութիւններ են, որոնք ստիպեցին վերջինին ծառայութիւնը թողնել։

ՊԱՐԻԶ, 21 մարտի։ Լուբերին նայելով, մինիստր-նախագահ Ռուվիէն մտադիր է հրաժարական տալ։—Միացեալ-Նահանգների պետական քարտուղարը մեկնեց Նէապոլ, ուր կը մնայ մինչև առողջութիւնը վերականգնելը։—Մայիսին պարսից Շահը կը գնայ Ֆրանսիա, որպէս զի բժշկվի Կոնտրքսէվիլլում։

ՀԱՄԲՈՒՐԳ։ Վիլհէլմ կայսրը ժամանեց Մահոն նաւահանգիստը։ Ընդունելութիւնը ջերմագին էր։

ՏԱՆԺԷՐ։ Լուբերի համեմատ, Ֆրանսիան կօնցէսիա ստացաւ ծովային հեռագրաթել անցկացնելու համար։

ԲԵՐԼԻՆ։ «Մօրնինգ Պոստ» լրագիրը պնդում է, որ Էդուարդ թագաւորի Մարսէլից Պարիզի վրայով անցնելու ժամանակ տեղի կունենայ նրա հանդիպումը նախագահ Լուբէի հետ։

ԱԹԷՆՔ։ Սգակեանակիս, Կրետէի ազգային ժողովի նախկին նախագահը, աշկարայ ապարէզ եկաւ։ Կանդիայում Յունաստանի հետ միանալու համար։ Էական փոփոխութիւն տեղի չունեցաւ։ Կրետէի դրութեան մէջ։ Միջազգային զինուորական իշխանութիւնները շարունակում են հարցափորձի ենթարկել ապըստամբներին։ Տէրիսսо շրջանում ապստամբները խնդրեցին տալ նրանց ութ օր ժամանակամիջոց, բայց իշխանութիւնները մերժեցին նրանց խնդիրքը։ Սակայն կարծում են, որ նրանց դէմ զինաւորված ոյժ չի գործադրվի։

ԲԷԼԳՐԱԴ։ Թնդանօթների համեմատական փորձերը շատ երկար կը շարունակվեն և կարող են կորուստի մատնել փոխառութեան և վերազինութեան գործը։ Մինիստրութիւնը վճռեց դադարեցնել փորձերը և կանգ առնել Ֆրանսիական սիստեմի թնդանօթների վրա, արտիլերիական կոմիտէի եզրակացութեան համեմատ։ Թագաւորը սկզբում շրջապատողների ազդեցութեան տակ խորհրդակցեց դիմադրական կուսակցութեան պատկանող քաղաքական մի քանի գործիչների հետ, սակայն մինիստրութիւնը, այդ վարմունքը հակառակ համարելով պարլամենտական կազմին, հրաժարական տուեց։ Կարծում են, որ թագաւորը կը զիջի և կաբինէտը կը մնայ։

ՊԱՐԻԶ։ Բրիտանական հիւպատոսը Բրէստում ծանուցում ստացաւ, որ 8 էսկադրային զրահակիրներից և հինգ կրէյսէրներից բաղկացած բրիտանական ատլանտիական նաւատորմը, որը Նէյծովպէտի հրամանատարութեամբ, կայցելէ Բրէստը յուլիսի առաջին կէսին։ Ֆրանսիական էսկադրան, որը կուզարկվի Սպիտէդ օգոստոսին, ի պատասխան անգլիական էսկադրայի այցելութեան, բաղկացած կը լինի հինգ էսկադրային զրահակիրներից, ինն կրէյսէրներից և հինգ հակականանաւերից։ Կայլարի հրամանատարութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ 22 մարտի։ Ցարսկօե-Սելօ ժամանեցին պրուսական պրինգ Հէնրիխը իր օգոստափառ ամուսնու հետ։ Կայարանում նրանց դիմաւորեցին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա և թագաւորական շքախումբը։ Ցերեկվայ մէկ ժամին Ալէքսանդրեան պալատում կայացաւ ընտանեկան նախաճաշ։

ԱԹԷՆՔ։ Կրէտէ կողուց ստացած տեղեկութիւնների համեմատ, դրութիւնը վատացաւ։ Առաջիկայ դէպքերի նշաններ են երևում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ՈՍԱԿԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՒԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի աղձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աշխ. ներքին և նեարդային
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթ., վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱԼՕԼՕՎ ատամնարոյժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՀԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Գ. Ա. ԱՐԳԱՋԻԱՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոգիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—ատամ. ծաղկահատ և բժշկական ժարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

Համալսարանական կրթութիւնով
ՄԻ ԳԵՐՄԱՆԱՑԻ,
գերմանական գիտական թերթի աշխատակից, որ լաւ գիտէ ֆրանսերէն և անգլիերէն, տալիս է գերմաներէն լեզուի և գրականութեան դասեր։ Բարօնակի փողոց, № 16 բնակ. 3. տեսնել կարելի է 1—3 և 5—6 ժամերին։
1—1

ՄԻ բոյորովին նոր օրիորդ գտնվում է յեսին թշուառութեան մէջ, կարօտ է բարեբար մարդկանց օգնութեան. խնդրում է բարեբարներին օգնութիւն հասցնել. հասցէն՝ Պէսկովսկայա փող. տուն Էնֆիաղժեանցի № 8 օր. Մնացականեանին։ 1—1

Ուսմնական վարչութեան թոյլատրութեամբ, մի գերմանուհի, փորձված վարժուհի ընդունում է գիշերօթիկ և ելթեկ աշակերտներ, պատրաստում է բոլոր առարկաներից միջնակարգ ուսումնարանների ծրագրով։ Տալիս է դասեր ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուներից. հասցէն՝ Елизаветинская д. № 5, кв. 4. Տ. Միլլեր։ 1—1

Լոյս տեսաւ առանձին գրքոյկով
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ
«ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ԱՐՑԱԽՈՒՄ և ՍԻՒՆԻՔՈՒՄ»
(հայ տուրիստի յիշողութիւններից)
Գինն է 20 կոպէկ
Դիմել գրավաճառանոցներին 1—5

ԹԱՐԳՄԱՆԵԼ ԵՄ
և պատրաստ են տպագրութեան
1. В. Свѣтловъ—«Пути жизни», ժամ. վէպ, մօտ 400 տպ. երես.
2. Л. Н. Толстой—«О жизни».
3. » » «О любви».
4. » » «О женщинахъ».
5. Г. Сенкевичъ—«Чья вина».
6. » » «Комедія изъ за ошибокъ».
Վ. Տէր-Աբրահամեան
Թէհրան. 2—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. Ստեփանեան
Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելիամինսկայա փ. № 8.

Թիֆլիսի Կանանց Ընկերութեան
ԿՕՄԻՏԷՏԸ
որ իր վրա է առել Հեռաւոր Արևելքում հիւանդանոց շինել կովկասցի վիրաւոր և հիւանդ զինուորների համար, յայտնում է իր անդամներին և այդ գործին համակրողներին, որ ընկերութեան ընդհանուր ժողովները տեղի են ունենում ամեն շաբաթ, կիրակի օրերը, ցերեկվայ ժամը 12-ին, նահանգային դատարանի շէնքում։
Հիւանդանոցի համար
ՆՈՒԷՐՆԵՐ
ընդունում է յիշված ընկերութիւնը հետևեալ անձերի մօտ.
Սագարդա—Պասերբսկայեայի մօտ, Լերմոնտովսկի փող. սեփ. տուն։
Դաւիդովիչի մօտ, Կօբիյսկի փող. № 5.
Ասեեվայի մօտ, Կիրպիչնի փող. № 26.
Պետրոպաւլովսկայեայինն, Լաբորատորնի փող. № 11, (ժամը 10—12 առաւ.)։
Այտօվսկայեայի մօտ, Բարօնսկաեա № 16, (ժամը 4 ից սկսած)։
Զապլիցի մօտ, Կիրօչնի փող., Ամարային կրուժօկի մօտը (ժամը 3—4)։
Ստրաշկեվիչի մօտ, Անդրէևսկի. փող. № 27 (ժամը 3—4) 4—5

Մ ի ա յ ն 10 օ ր
(Մարտի 21-ի երկուշաբթի օրվանից սկսած)
Ա Ռ Ա Ն Զ Ն Ա Պ Է Ս
ԷԺԱՆԱՑՐԱԾ ԳՆԵՐՈՎ
կը ծախվեն ամեն տեսակի դիւանական և աշակերտական պարագաներ, շնորհաւորական և այցետոմսեր և ուրիշ շատ իրեր։ Իշխան Պասկեվիչի գործարանի թղթի պահեստի մագազինում, Գոլովինսկի պրոսպէկտ, Ալտիստական ընկերութեան շէնքի մէջ։

Կովկասում տպագրական գործով պարապող անձերի փոխադարձ օգնութեան ընկերութիւնը
Այդ ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը կայանալու է ուրբաթ, մարտի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում։
Քննութեան առարկաներն են.
1) Ընկերութեան հիմնարկութեան համառօտ պատմական տեսութիւնը։
2) Կանոնադրութիւն մշակող յանձնաժողովի առաջարկը անդամ ընդունելու մասին այն անձերին, որոնք մինչև ընդհանուր ժողովը ցանկութիւն են յայտնել լինելու անդամ։
3) Ընկերութեան կանոնադրութեան ընթերցումը և ընկերութեան բացումը։
4) Վարչութեան և վերատեսուչ յանձնաժողովի անդամների և նրանց կանդիդատների թիւ որոշումը, նոյնպէս և ընտրութիւնը։
5) Վարչութեան կազմութիւնից ծագող հարցեր։
Անդամ կարելի է նախապէս գրվել և անդամական ընտրութեան տոմսեր ստանալ. ա) «Тиф. Лист.»-ի խմբագրատանը Ս. Կ. Միխայլովից (ժամը 11—4 ը). բ) «Ցնօբիս. Փուրցէլիի» խմբագրութեան մէջ Ա. Գ. Զաբադարիից և գ) քաղաքային կրէդիտային ընկերութեան մէջ Ռ. Ա. Յովհաննիսեանից (ժամը 10—2 ին ցերեկը)։ (ա. օ.) 1—3

„ԶԱԹԱՅ“
Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
և Լիկվիդացիայի յանձնաժողովը յայտնում են իրը տեղեկութիւն պ.պ. բաժնետէրերին, որ փայերի փոխարէն բանկից դրամ ստանալու համար չէկեր տալը հաստատուն, տեղի կունենայ ընկերութեան գրասենեակում—Վելիամինսկի փողոց՝ Խանկալամեանի տանը, ամեն օր, սկսած մարտի 22-ից մինչև ապրիլի 15-ը, ցերեկվայ ժամը 11-ից մինչև 2-ը։ Չէկերը կը տրվեն յայտարարութիւն տրվելու հետևեալ օրը։ Նոյն տեղում ծախվում է և մի երկաթէ դրամարկղ և գրասենեակի պարագաներ։ (ապ. 3, 10) 1—3

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը
յայտարարում է ընկերութեան յարգելի անդամներին, որ կիրակի, մարտի 27-ին, առաւօտեան ժամի 12-ին նշանակված է տարեկան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Նոյն Ընկերութեան արհեստանոցում, Գանձվսկայա, № 25.
Ժողովի խորհրդակցութիւնների նիւթը.
1) Ուղեալ 1904 թ. մարտի 14-ի ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը.
2) Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը։
3) Վարչութեան գործունէութեան հաշիւը վասն 1904 թ.
4) Ընկերութեան դրամագլխի հաշիւը վասն 1904 թ.
5) 1905 տարվայ նախահաշիւը։
6) Վարչութեան 3 անդամի և 2 փոխանդամի ընտրութիւնը։
7) Վերաստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխանդամի ընտրութիւնը։
8) Ընկերութեան արհեստանոցի համար հող գնելու և շինութիւն կառուցանելու խնդիրը։
Նոյն օրը, առաւօտեան ժամը 10-ից ընկերութեան արհեստանոցում կը վաճառվին կանանց և մանուկների պատրաստի սպիտակեղէն ու զգեստներ։ (17, 23, 27) 2—3

Բժիշկ Ա. Միխիթարեանց
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանօվի, դեղատան կից։ (տ. օ.) 42—80

Թարգմանված է և շուտով կը յանձնվի տպագրութեան
Լ. Ն. Տոլստոյի
«ԿՐԵՅՑԵՐԵԱՆ ՍՕՆԱՏ»
Թարգմ. Մ. Մ. Ղազարեան։
ա. օ. 4—5

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեանց
ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6։
Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, լուսանկար Լալայեանցի բնակարան։

Լոյս է տեսել և վաճառվում է
ԽԱԺԱԿ
«ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ»
Գինն է 40 կոպէկ
Դիմել Թիֆլիս—«Գուտտենբէրգ» գրախանութը։ Առնուազը 5 հատ ցանկացողը կարող է դիմել հեղինակին, «Մշակ»-ի խմբագրութիւն։

Նոր լոյս տեսաւ
Ք. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՑԻ
մշակած հայկական երգերի
Երկրորդ տետրը
որը պիանոյի համար ներդաշնակել է
ԼԷՕՆԻԴ ԿՆԻՆԱ
Առաջի տետրի գինն է՝ 1 ը., երկրորդի՝ 75 կ., երկու տետրն էլ վաճառվում են Լանկոյի երաժշտական և «Գուտտենբերգի» գրավաճառանոցներում, «Պուզգեսս» խանութում և հրատարակչի—Պ. Կարա-Մուրզայի (ул. Панасевича № 8) մօտ. նրա մօտ է և պահեստը։ 6—10

Ծանուցվում է ի լուր ազգայնոց, թէ Թիֆլիսի սրբազան առաջնորդի նախագահութեամբ կազմված է մի Յանձնաժողով Զխարի հրկիզեալների համար նուիրաբերութիւններ ընդունելու և գործադրելու։ Ժողովի անդամներն են՝ տ.տ. իշխանուհի Մ. Թումանեան, Մ. Մզաբեուլեան, Վ. Եսայեան, պ.պ. ճարտարապետ Ն. Գրիգորեան, երդ. հաւատարմատարի օգնական Մնացականեան, բժ. Ն. Կաճկաճեան։
Հրկիզեալներին օգնելու պաշտօնական թոյլտուութիւնն ստացված է Թիֆլիսի պ. նահանգապետից։
Խնդրում ենք նուիրաբերութիւններն ուղարկել Յանձնաժողովի գանձապահ իշխանուհի տ. Մ. Թումանեանին, Բարեատինսկայա, № 8։ 5—5

Գրօվիզոր Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ
ԲՕՐՕ-ՆԱՖԹԱԼԱՆ
Նոր նիւթը
Կատարելապէս ոչնչացնում է գլխի թեփը, ամրացնում է մազերը և օգնում մազերի բսնելուն. տալիս է մազերին իրանց բնական ու հաստատ տեսքը։ Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրև ոչ մի ջնասակար նիւթ չը պարունակող։
Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарами Въ Тифлисѣ, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի դեղատներում և դեղավաճառատներում։
Արժէքն է 1 բուբլի 25 կոպէկ։
(շ. 1 ան.) 38—50

Дозволено цензурою. Тифлисъ, 22-го Марта 1905 г. Ցպարակ «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мад. ул. №15